



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30143
Մարտ 3, 1987

Արժանաշնորհ
Տ. Արսէն Ա. Բհնյ. Պարսամեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Վիրճինիա.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք Փետրուար 24, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 18ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վիրճինիա Ապրրնաթի
Մարմի Պարոնեան
Ճան Աշմեան
Ալիս Տարհանեան